

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵԿՄ ՆԱԻՐԻԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

28.05.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը մասնակցել է Երկրապահ կամավորականների միության Նաիրիի տարածքային բաժանմունքի կողմից Հանրապետության տոնի առթիվ կազմակերպված միջոցառմանը:

Կոտայքի մարզպետը շնորհավորել է Հանրապետության տոնի կապակցությամբ իրականացվող միջոցառման բոլոր մասնակիցներին, կարևորել նմանատիպ ձեռնարկների իրականացման անհրաժեշտությունը, ընդգծել հայ ժողովրդի նորոյա հաղթանակների կերտման գործում երկրապահների ունեցած առանցքային մասնակցությունը:

Մայիսի 28-ի առիթով կազմակերպված տոնական հանդիսության շրջանակներում Կոտայքի մարզպետ Ա.

Հարությունյանը ԵԿՄ Նաիրիի տարածքային բաժանմունքի պատասխանատուների հետ համատեղ քննարկել է նաև հետագա համագործակցությանը և համատեղ ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր:

Հանդիպման շրջանակներում ձեռք են բերվել նաև նմանօրինակ միջոցառումների շարունակականությանը միտված պայմանավորվածություններ: